

Գ Ո Ր Գ Ա Ր Հ Ե Ս Տ Ը

Այս բաժնին մէջ պիտի ծանրանամ զորդին արհեստական մասին: Հայաստանի մէջ զորդ հիւսելու կերպերը, նիւթերը եւ անոնց պատրաստութեանց կերպերը, նաեւ գոյները: Բայց նախ քան այդ՝ կ'ուզեմ ամփոփ կերպով խօսիլ կապերտին եւ գորգին մասին, տալով անոնց արհեստական պատմականը:

Կապերտը եւ զորդը երկու տարբեր տեսակ հիւսուածեղէններ են, թէեւ երկուքին ալ զործածութեան նպատակը նոյնն է: Կապերտը, անխաւ երբեմն, երկու երեսներն ալ համանման, որով ետեւ եւ առաջ չունեցող հիւսուածեղէն մըն է, բայց մեծ մասամբ անոնք միակ երես մը ունին, իսկ ետեւի կողմը բանուածքին աւելորդ թելերը թոյլ կերպով բաց թողուած են, տալով մէկ երեսով ձեռագործի մը տպաւորութիւնը:

Հնագոյն կապերտը կամ ֆիլիմը աւելի հազուագիւտ է քան զորդը, առաջինը չունենալով այն յարզը՝ ինչ որ վերջինն ունի, նաեւ չունենալով այն խաւը որ երկար կեանք կ'ապահովէ զորդին: Որով զարմանալու չէ որ կապերտները աւելի հազուագիւտ են քան հին գորգերը: «Հնագոյն կտորը (կապերտի) որուն մասին որեւէ ծանօթութիւն ունինք, ծուէն մըն է, գտնուած արեւելեան Թուրքեստանի հին բնավայրի մը՝ Խոթանի (Khotan) մօտ աւերակներուն մէջ՝ հնախոյ Dr. M. A. Steinի կողմէ գտնուած, այս աւերակները մեր թրւականներուն Դ կամ Ե դարերուն թաղուած էր աւաղի հոսանքներուն տակ»<sup>(1)</sup>:

Հոս մեզ հետաքրքրողն ըլլալով Հայկական կապերտները, ըսեմ որ անոնք միակ մէկ տեսակ չեն: Սակայն հայկականները կը տարբերին պարսկականներէն գոյնով, բանուածքով եւ ծաւալով: Պարսկականներէն նշանաւորագոյններն են Սինէ ֆիլիմները, որոնք շատ կը նմանին այդ շրջանի գորգերուն՝ իրենց մանր գծագրութեամբ եւ ժանգագոյն, կարմիր, դեղին գոյներով: Իսկ հայկականները աւելի պատշաճ պիտի նկարագրեմ հոս: Միայն թէ ինչ որ ալ ըլլայ բանուածքին կերպը, հիւսելու եղանակը նոյնն է:

(1) Oriental Rugs. — Walter A. Hawley. — New York, 1927, p. 278.